

1953	ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ	Թ. 4-5
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		
ԽՄԲ. - Հայ Գողգոթան	65	
» - Լուսանորոգը	68	
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ		
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Վահան Գողթնա- ցիի հետքերուն վրայ	70	
ԱԳԱՍԵԱՆ Հ. ԱԲԵՆԱՍ. - Պեղատնորի արար պատմությունը և Հայերը	77	
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ		
ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ Հ. ԵՓՐԵՄ. - Մարաշահայ բարբեր	83	
ԳՐԱԿԱՆ (Քերթումներ)		
ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Պատկաստայնի ջրվեժը	87	
ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ. - Իրիկյային	88	
» » - Երեկոն	88	
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Սրբի ծաղիկը	88	
» » - Պարտիզանը	88	
» » - Աղթը աստղե- րուն համար	88	
ԼԵՋՈՒԱԿԱՆ		
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ. - Ահմայ պատա- խան մը (սու Պրն. Գ. Բամպուկյան)	89	
ԳՐԱԹՕՍԱԿԱՆ - ՕՐՈՒԱՆ ԳՐԲԵՐ		
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ. - «Ակն և Ակնցիք» (Առաքել Քեչեհանի)	92	
» » - «Հայրի» (Բեն. Կ. Ժամկու- չեհանի)	94	
» » - «Կեանքիս ճամբան» (Զ. Գա- լեմեանի)	95	
» » - «Առնան ուղղադրություն» (Լ. Գարապետյանի)	96	
ՓԷՉԻԿԵԱՆ Հ. ԵՂԻՍ. - «Ոսկեմատան - Յիշատա- կարան Տեղարան Երկաթ Մշակ. Միություն» (Խմբ. Վ. Արզաթանի)	98	
» » - «Համազգային» տարե- գիրք (Խմբ. Կ. Գեորգիանի)	100	
ԱՐԶԱԳԱՆԳՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ		
ԽՄԲ. - Յորեկինական հանդեսներ ի պատիւ Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեանի (Փարեզ)	103	
» - Հայկական շարականներու երոզական խաղաղություններ հրատարակության մասին	107	

1953	Avril-Mai	N. 4-5
SOMMAIRE		
ARTICLES DE FOND		
Réd. - Le Golgotha Arménien	65	
» - Mékhitar l'Illuminateur	68	
PHILOLOGIE		
Hovhannessian P. Vahan. - Sur les traces de St. Vahan Golthnatzi	70	
Adamian P. Abraham. - L'historien arabe Belladhori et les Arméniens	77	
ETHNOGRAPHIE		
Der Ghazarian P. Ephrem. - Les Coutumes des Arméniens de Marache	83	
LITTERATURE (Poésies)		
Serabian Aramais. - La cascade de Badsga- stein	87	
Arsène Yergath. - Vespéral	88	
» » - Le soire	88	
Hovhannessian P. Vahan. - La fleur du cœur	88	
» » - Le jardinier	88	
» » - Prière pour les étoiles	88	
LINGUISTIQUE		
Der Nersessian P. Nersès. - Réponse à Mr. G. Pamboukdjian	89	
RECENSIONS		
Der Nersessian P. Nersès. - «Akn et Akntzik» (de A. Ketchian)	92	
» » - «Hayni» (de B. G. Jamgotchian)	94	
» » - «Par la rue de ma vie» (de Z. Kalém- karian)	95	
» » - «Orthographe ar- ménienne» (de L. Karakachian)	96	
Paitchikian P. Elie. - «Livre d'Or - Mé- moire» de l'Union Culturelle «Dikran Yergath»	98	
» » - Almanach de «Ha- mazkaïne»	100	
ECHOS ARMÉNIENS		
Rév. - Les fêtes jubilaires en l'honneur du R. P. Sahag Der Movsessian (à Paris)	113	
» - La notation musicale européenne des hymnes de l'Eglise arménienne	107	

Բ Ա Ջ Մ Ա Վ Ե Պ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1953
ՀԺԱ. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ - ՄԱՅԻՍ
ԹԻԻ 4-5



Հ Ա Յ Գ Ո Ղ Գ Ո Ր Ո Ւ Ն

Ամէն տարի աստուածային Գողգոթային հետ կ'արիւնին մեր հայրենի լեռ-
ներն ալ. ամէն Ապրիլի մեր դաշտերու ծաղկէհոյլը հազարգունեան տարազ-
ներով թաղմանական թափօրի կ'ելլէ, ու իր լուռ ու տխրազին համերգով և
անհուն սուգով կ'երգէ երգը մահուան՝ լացներով երկիրն ու երկինքն անդամ.
կ'երգէ անլուր ցաւերը, ահաւոր խոշտանդանքները, ամէնէն զարհուրելի և
եղերական մահերը մեր ցեղին, ամբողջ ազգի մը նահատակութիւնը:

Ու դեռեւն ամէն համակ արցունք և արիւն, ողբ ի բերան դեռ կ'երթան
յուզուած, դեռ կ'երթան անհուն խռովքով ու անհուն ցաւով, հեռու, հե-
ռու... պատմելու դարերուն որ կու դան, սերունդներուն որ պիտի անցնին՝
մեր ողբերգութիւնը սարսափելի և սահմանեցուցիչ, այն աղէտը ահաւոր որ
եկաւ մեր ցեղին գլխուն, աղէտ ու ողբերգութիւն զոր ալիք ալիքի պատմեց
օրհասական շրթունքներէ քաղած, ու ալիք ալիքի կտակեց անպատմելի պատ-
մութիւնը հայուն, այն չարաչուք օրերուն:

Ու չարաբաստիկ օրերէն ի վեր դեռ իր դոյն ու սարսուռը կ'ապրի կարծես
իր անդուլ սասանումներով մեր բնապաւտը բովանդակ, երեսուն դարերու
մեր հայրենիքը պաշտելի:

Մեր երկիրը աւերուած՝ որ սուրբ է եւ հին...
Ուրտեղ լաց է ամէն երգ եւ ողբ՝ ամէն գիրք:
Տաճար է մեր երկիրը, սուրբ է ամէն քար...

